

«ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԷԹԻԿԱ ԵՎ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

«Տնտեսություն և հասարակություն» գիտական հանդեսի խմբագրական խորհուրդը առաջնորդվում է Գիտական հրապարակումների էթիկայի կոմիտեի կողմից ներկայացվող ուղեցույցով և Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի կանոնակարգերով:

Խմբագրական խորհուրդ

Հոդվածի տպագրման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է խմբագրական խորհրդի կողմից՝ խմբագրական խորհրդի նիստում:

Հրապարակման չափանիշները գիտականությունը, օրիգինալությունը, արդիականությունը և որակն են՝ անկախ հեղինակների ռասայից, սեռից, ազգությունից, կրոնական կամ քաղաքական համոզմունքներից:

Խմբագրական խորհուրդը պարտավոր է ապահովել հեղինակների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը և չօգտագործել դրանք այլ նպատակներով:

Խմբագրական խորհուրդը պարտավոր է հարգել ստացվող տեղեկատվության արժեքն ու սեփականության իրավունքը և առանց համապատասխան թույլտվության չհրապարակել այդ տեղեկատվությունը:

Հեղինակներ

Հեղինակը պարտավոր է անհրաժեշտության դեպքում խմբագրական խորհրդին տրամադրել չմշակված, առաջնային տվյալներ:

Հեղինակը պարտավոր է պահպանել ակադեմիական էթիկայի կանոնները:

Բացի ուղղակի հղումներից, հեղինակը պարտավոր է հիշատակել նաև այն հրապարակումները, որոնք ունեցել են ազդեցություն հոդվածի վրա: Մասնավոր կերպով ձեռք բերված տեղեկատվությունը, զրույցի, նամակագրության կամ երրորդ կողմերի հետ քննարկումը չպետք է օգտագործվեն առանց գրավոր թույլտվության:

Համահեղինակությունը պետք է սահմանափակվի այն անձանց շրջանակով, ովքեր նշանակալի ներդրում են ունեցել աշխատանքի բավանդակության, դիտարկվող ուսումնասիրության կատարման կամ մեկնաբանման գործում:

Հոդվածը կամ դրա էական հատվածները չպետք է նախկինում հրապարակված լինեն:

Հոդվածում էական սխալ կամ անճշտություն հայտնաբերելու դեպքում հեղինակը պարտավոր է ծանուցել խմբագրական խորհրդին հոդվածը հետ կանչելու կամ ուղղելու մասին:

Գրախոսներ

Ներկայացված հոդվածները ուղարկվելու են անանուն («կույր») գրախոսման՝ երկու անկախ փորձագետների կողմից, և միայն դրական կարծիքի արժանանալուց հետո են դրանք ենթակա տպագրության: Գիտական և գիտատեխնիկական պահանջները չբավարարելու դեպքում հոդվածը չի տպագրվում, և անկախ փորձագետների կարծիքը ուղարկվում է հեղինակին (հեղինակային խմբին):

Անանուն գրախոսության համակարգով գրախոսվող հոդվածները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- գիտականություն,
- օրիգինալություն,
- արդիականություն,
- որակ:

Գիտականություն՝ հրապարակման մեջ գիտական քննարկման տարրերի բավարար առկայություն:

Օրիգինալություն՝ աշխատանքում ներկայացված արդյունքները չպետք է հայտնի լինեն և նախկինում հրապարակված:

Արդիականություն՝ հոդվածում նկարագրված գաղափարների, մեթոդների կարևորություն, օգտակարություն և կիրառելիություն:

Որակ՝ հոդվածի գիտական, տեխնիկական և/կամ մեթոդական ներդաշնակություն, արդյունքների և հղումների ճշտագրություն և ստուգելիություն, ըստ որոնց հնարավոր կլինի ճշմարիտ ապացույցներ գտնել:

Ներկայացված հոդվածների համապատասխանությունը վերոնշյալ պահանջներին որոշում են գրախոսող անկախ փորձագետները: Ըստ այդ որոշումների խմբագրական խորհուրդը ընդունում է ստորև նշված որոշումներից մեկը.

- Հրապարակվում է (Accepted),
- Հրապարակվում է նշված դիտողությունները վերացնելուց հետո (May be published after revision),
- Չի հրապարակվում (Rejected):

Ցանկացած գրախոս, ով իրեն կոմպետենտ չի համարում դիտարկելու հետազոտությունը կամ գիտի, որ նշված ժամկետներում դրա իրագործումն անհնար է, պետք է տեղեկացնի խմբագրական խորհրդին, որպեսզի ընտրվի մեկ այլ գրախոս:

Կարծիքները պետք է լինեն ազնիվ, օբյեկտիվ և զերծ անձնական վերապահումներից: Հեղինակի անձնական քննադատությունը արգելվում է: Գրախոսները պետք է հստակ արտահայտեն իրենց տեսակետները՝ հիմնավոր փաստարկներով:

Գրախոսը հոդվածը ստանալուց հետո շահերի հավանական բախման դեպքում պարտավոր է տեղեկացնել խմբագրական խորհրդին:

Հեղինակից, գրախոսներից, խմբագրական խորհրդից բացի, որևէ մեկին տեղեկատվություն փոխանցելն արգելվում է:

Ներկայացված հոդվածներում առկա չիրապարակված նյութերը չպետք է օգտագործվեն խմբագրական խորհրդի կամ գրախոսի սեփական հետազոտության մեջ՝ առանց հեղինակի գրավոր համաձայնության: Գրախոսման միջոցով ձեռք բերված լրացուցիչ տեղեկատվությունը կամ գաղափարները պետք է գաղտնի պահվեն և չօգտագործվեն անձնական շահերի համար:

Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլեկտրոնային հասցեի միջոցով: